ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/09, 24.02.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Կամուրջշին» ՓԲԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» բաց մրցույթ

Գնման առարկան՝ Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու 22.02.2021 թվականի թիվ 5 արձանագրության վերացման կամ չեղարկման որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ
պետական գրանցման համարը՝ 271.120.02762
ՀՎՀՀ՝ 01201526
հասցե՝ ՀՀ ք. Երևան Դավթաշեն 6-րդ փող. 40/1 փուն
տնօրեն՝ Ռուբեն Գեորգիի Խաչատրյան
անձնագիր՝ AT0512375, տրված 13.07.2020թ. 001-ի կողմից
հասցե՝ ՀՀ ք. Երևան Աղբյուր Սերոբի փող. 5 շ. 16 բն.
Ներկայացուցիչ փաստաբան՝ Հակոբ Քոյլոյանից
փաստաբանական գործունեության արտոնագիր՝ թիվ 2707
ն/ք՝ 012715868, տրված 30.04.2020թ., 013-ի կողմից
հասցե՝ ՀՀ ք. Երևան Դավթաշեն 4-րդ թաղ. 11շ. 7բն.
հեռ՝ 099997665
էլ. փոստ՝ koyloyan27@gmail.com

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
հասցե՝ ՀՀ ք. Երևան Արգիշտի 1

գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» բաց մրցույթ

ԲՈՂՈՔ

թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգ վերաբերյալ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1.1. Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար 25.11.2020 թվականին հրապարակել է Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» բաց մրցույթի հրավերը (այսուհետ նաև գնման ընթացակարգ):

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերությունը: Պատվիրատուի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու վերաբերյալ թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի շրջանակում 19.01.2021 թվականին կազմվել է թիվ 3 արձանագրությունը:

Digitally signed by
KOYLOYAN HAKOB
8714810323
Date: 2021.02.24
09:04:08 AMT

1.3. Պատվիրատուի կողմից 01.02.2021 թվականին «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերությանն է ուղարկվել պայմանագրի նախագիծը, որը մասնակցի կողմից ստորագրվել և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 11.02.2021 թվականին տրված թիվ 755-02 բանկային երաշխիքի հետ միասին 12.02.2021 թվականին տրվել է Պատվիրատուին:

1.4. Պատվիրատուն 12.02.2021 թվականի թիվ 61/18 գրությամբ հայտնել է, որ բանկային երաշխիքի ժամկետը չի համապատասխանում հրավերով նախատեսված վերջնաժամկետին և ետ է վերադարձնում այն ուղղման նպատակով, որի վերաբերյալ 12.02.2021 թվականին կազմվել է թիվ 4 արձանագրությունը:

1.5. Մասնակիցը հաջորդ իսկ աշխատանքային օրը դիմել է բանկային երաշխիքում փոփոխություն կատարելու համար, որը բավարարվել է հաջորդ օրը 16.02.2021 թվականին բանկային երաշխիքում կատարվել է լրացում՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 19.02.2021 թվականին տրված թիվ 1001-02 գրությամբ:

1.6. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.02.2021 թվականին կազմված թիվ 5 արձանագրությամբ որոշվել է մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից, բանկային երաշխիքի ուղղումը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու հիմքով, որի վերաբերյալ տեղեկացվել է մասնակիցը 22.01.2021 թվականի թիվ 61/23 գրությամբ:

2. ***<u>Գործի փաստական և իրավական հիմնավորումները.</u>***

Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից պետք է եզրակացնել հետևյալը, որ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը դա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը ապահովելու համար երաշխիք է, որով պայմանավորված երաշխավորվում են Պատվիրատուի իրավունքները: Օրենսդիրը սահմանել է նաև Պատվիրատուի համար պարտավորություն պայմանագրի նախագիծը կազմելու և այն կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ, իսկ Մասնակցի համար այն ստանալուց հետո կնքելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելու պարտավորություն: Այսինքն պետք է փաստել, որ սույն դեպքում կիրառելի են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված կարգավորումները: Մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

2. Պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Նույն օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

Վերոգրյալի համապարփակ վերլուծության արդյունքում պետք է փաստել այն, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից հայտ ներկայացնելը և պատվիրատուի կողմից այն բավարար գնահատելն ու մասնակցին հաղթող ճանաչելը վկայում են կնքման ենթակա պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնությունը ձեռք բերելու մասին, իսկ պատվիրատուի կողմից պայմանագրի նախագիծը մասնակցին ուղարկելը նշանակում է օֆերտան ուղարկված, որի ակցեպտավորման հիմքով անթույլատրելի է դրա հետկանչելիությունը: Նշվածը դիտարկելով Գնման ընթացակարգի համատեքստում պետք է փաստել, որ մասնակցի կողմից պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելուց հետո օֆերտան համարվում է ակցեպտավորված:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցի՝ «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերության կողմից հայտ ներկայացնելով, այդ թվում նաև գնային առաջարկ, իսկ Պատվիրատուի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից մասնակցին հաղթող

ճանաչելու արդյունքում պետք է փաստել, որ պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնությունները ձեռք են բերվել: Ուստի մասնակցի կողմից պայմանագրի նախագիծը կնքելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելու պարտավորությունը կատարելով պայմանավորված կողմերը փաստել են պայմանագրի կնքումը:

Ինչ վերաբերվում է պայմանագրի կնքման հետ միաժամանակ պայմանագրի ապահովում ներկայացնելուն, ապա պետք է արձանագրել, որ Գնումների մասին օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջից 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցը պարտավոր է ներկայացնել այն, և մասնակիցը կարող է զրկվել պայմանագրի կնքման իրավունքից այդ ժամկետում պայմանագրի ապահովում չներկայացնելու դեպքում: Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ, պետք է կարևորել նաև հետևյալը, որ մասնակիցը պայմանագիրը կնքել և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքը ներկայացրել է սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում, ուստի գործող օրենսդրական կարգավորմամբ մասնակիցը կատարել է իր պարտավորությունները: Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ մասնակցի կողմից 12.02.2021թ. ներկայացված բանկային երաշխիքը ենթակա էր շտկման, ապա հայտնեմ, պայմանագրի ապահովման մեջ առկա սխալի ուղղումը չի կարգավորվում գործող օրենսդրությամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերը իրականացրել են բանակցություններ բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերված պայմանագրի կնքման շրջանակում բանկային երաշխիքում առկա սխալի ուղղման վերաբերյալ, ապա այդ սխալի համար օրենքով ժամկետներ սահմանված չլինելու պարագայում գտնում եմ, որ որպես օրենքի անալոգիա կիառման է ենթակա Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նշված 10 աշխատանքային օրվա ժամկետը, քանզի Պատվիրատուն սույն դեպքում իր 12.02.2021 թվականի թիվ 61/18 գրությամբ չի նշել, թե՞ ինչ ժամկետում պետք է ուղղվի սխալը ուստի դրա ժամկետների վերաբերյալ հարցը պետք է կարգավորվի նշված տարբերակով, հակառակ դեպքում այն պետք է կարգավորվի ողջամիտ ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որպես պայմանագրի ապահովում ներկայացվող բանկային երաշխիքում առկա սխալի ուղղում կատարելու համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չեն ժամկետներ, ինչպես նաև Պատվիրատուի 12.02.2021 թվականի թիվ 61/18 գրությամբ ներկայացված սխալի ուղղում ատարելու պահանջով նույնպես ժամկետներ չեն սահմանվել, ուստի խնդիրը

ենթակա է կարգավորման գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան: Մասնավորապես ՀՀ գնումների մասին օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջից 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցը պարտավոր է ներկայացնել այն, այսինքն որպես համանման կանոն այս դրույթը կիրառելու դեպքում պետք է արձանագրել, որ պայմանագրի ապահովման մեջ սխալի ուղղում կատարելու պահանջի դեպքում կիրառելի է նույն ժամկետները՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածի դրույթները, և երկրորդ, քանզի գործող օրենսդրությամբ նախատեսված չէ պայմանագրի ապահովման մեջ առկա սխալի ուղղման համար տրվող ժամկետներ, ապա կիրառելի է նաև գործարար շրջանառության սովորույթները, որի համաձայն ինչպես պայմանագրի շրջանակում, այնպես էլ մինչև պայմանագրի կնքումը ծագած խնդիրներն ու վեճերը նախապես լուծվում են արտադատական եղանակով՝ բանակցությունների միջոցով, և սույն դեպքում Երևանի քաղաքապետարանը իր 12.02.2021 թվականի թիվ 61/18 գրությամբ սկիզբ է դրել ներկայացված պայմանագրի ապահովման մեջ առկա սխալի ուղղման վերաբերյալ բանակցությունների իրականացմանը, որը ողջամիտ ժամկետում՝ հենց հաջորդ աշխատանքային օրը մասնակցի կողմից ներկայացվել է բանկ ուղղման նպատակով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի ապահովման վերաբերյալ սխալը ուղղելու պահանջի մասին գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը կազմել է 12.02.2021 թվականին ժամը 15:00-ին և որից հետո նոր միայն ծանուցվել է մասնակցին: Գրեթե բանկային օրվա ավարտին կատարված ծանուցմանը արագ արձագանքելով հաջորդ իսկ աշխատանքային օրը մասնակիցը դիմել է սխալի ուղղման համար և բանկի կողմից 16.02.2021 թվականին կայացվել է դրական որոշում և բանկային երաշխիքում փոփոխություն կատարելու փաստաթուղթը տրամադրվել է Պատվիրատուին այն ստանալու օրը 19.02.2021 թվականին, այսինքն մասնակիցը դրսևորելով բարեխիղճ վարքագիծ ողջամիտ ժամկետներում կատարել է իրեն ուղղված պահանջը: Իդեպ ողջամիտ ժամկետի սահմանմանը օրենսդիրը անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ որի այն պարտավորության կատարումը, որը կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, որպես ողջամիտ ժամկետ նախատեսվում է պահանջը ներկայացնելուց հետո յոթօրյա ժամկետը: Սույն դեպքում պայմանագրի ապահովման մեջ առկա սխալի ուղղման պահանջի կատարման ժամկետ օրենքով նախատեսված չլինելու պարագայում, կիրառելի է յոթօրյա ժամկետը, որը 12.02.2021 թվականի պահանջի ներկայացումից հետո պահպանվել է և կատարվել 19.02.2021 թվականին:

Վերոգրյալը պետք է քննարկել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի համատեքստում, որով սահմանվում է գործարար շրջանառության սովորույթների հասկացությունը, ըստ որի գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն

կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է այնպիսի դրույթ, որի համաձայն օրենսդրության պարտադիր դրույթներին կամ պայմանագրին հակասող գործարար շրջանառության սովորույթները չեն կիրառվում:

Այսինքն վերոգրյալի կիրառման պարագայում պարզաբանման է ենթակա այն հարցադրումը, թե՞ արդյոք համանման կանոնների կամ գործարար շրջանառության սովորույթի կիրառումը կհակասի օրենսդրության պարտադիր դրույթներին, թե՞ ոչ:

Սույն դեպքում պարտադիր դրույթ ասելով պետք է բացահայտել պայմանագրի ապահովման էությունը, օրենսդրի կամքն ու նպատակը և այն խնդրի կարգավորումը, որին ուղղված է պայմանագրի ապահովման ներկայացնելը: Նշվածը իր հերթին պետք է համադրել մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի ապահովման մեջ առկա սխալին և բացահայտել այդ սխալը ուղղելու ժամանակահատվածում օրենսդրության պարտադիր դրույթների խախտման կամ չխախտման փաստը, որով պայմանավորված հնարավոր կլինի փաստել օրենքի անալոգիայի կամ գործարար շրջանառության սովորույթների կիրառման իրավաչափությունը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Այսինքն նշված իրավական նորմի մեկնաբանությունից պետք է փաստել, որ պայմանագրի ապահովումը, որպես պարտավորությունների կատարումը ապահովող միջոց, ինքնին պայմանագրի կատարման երաշխիք, որի բացակայությունը կարող է ռիսկի տակ դնել պատվիրատուի իրավունքների իրականացումը, և եթե Պատվիրատուի կողմից առկա պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ, որոշակի ժամկետով, ապա այդ ողջ ժամանակահատվածը համարվում է ռիսկային և ենթակա է ապահովման լրացուցիչ երաշխիքով: Սույն դեպքում օրենսդրությամբ սահմանված պարտադիր պայմանը պայմանագրի կնքման պահից սկսած և Պատվիրատուի պահանջով նախատեսված վերջնաժամկետի ընթացքում երաշխիքի ապահովումն է:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 11.02.2021 թվականին տրված թիվ 755-02 բանկային երաշխիքի 5-րդ կետի համաձայն այն ուժի մեջ է մտնում պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 11.03.2022 թվականը, որին ի լրումն տրված 19.02.2021 թվականի թիվ 1001-02 ուղղմամբ պայմանագրի ապահովման ժամկետի ավարտը փոփոխվել է 11.03.2022 թվականի փոխարեն 31.05.2022 թվականը, այսինքն ըստ էության Պատվիրատուի պահանջով առկա պայմանագրի ապահովումը երաշխավորված է այն ամբողջ ժամանակահատվածի համար, որը պահանջել է Պատվիրատուն, և պայմանագրի ապահովման մեջ սխալի ուղղումը չի հանգեցրել

այնպիսի իրավիճակի, որ գեթ մեկ օր բանկային երաշխիքով ապահովված չլինի պայմանագրի կատարումը:

Ավելին նշեմ, որ Պատվիրատուն ըստ էության առաջնորդվել է վերոգրյալ սկզբունքով, քանզի 11.02.2021 թվականի թիվ 755-02 բանկային երաշխիքում ուղղում կատարելու պահանջից հետո չի ձեռնարկել գործողություններ, այլ սպասել է սխալի ուղղման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելուն, որը ներկայացվել է նույն օրը երբ մասնակից այն ստացել է բանկից և 19.02.2021 թվականին նոր միայն Պատվիրատուն հայտնել է իր դիրքորոշումը բանկային երաշխիքի վերաբերյալ: Իդեպ հայտնեմ նաև, որ 19.02.2021 թվականին Պատվիրատուն թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2021 թվականի թիվ 5 արձանագրության պահին իր տիրապետության տակ ուներ հրավերով նախատեսված ժամկետներին համապատասխան ներկայացված բանկային երաշխիք, ուստի ակնհայտ է, որ ներկայացված փաստաթղթերի արդյունքում պետք է ընդուներ այլ որոշում: Բացի այդ 19.02.2021 թվականին ներկայացված թիվ 1001-02 բանկային երաշխիքի ուղղումը դա առանձին փաստաթուղթ չէ, այլ դա հանդիսանում է 11.02.2021 թվականի թիվ 755-02 երաշխիքի բաղկացուցիչ մաս և որպես բանկային երաշխիքի տրման ամսաթիվ դիտարկման է ենթակա 11.02.2021 թվականին տրված փաստաթուղթը: Օրինակ եթե կնքվում է պայմանագիր և հետագայում դիցուկ այդ պայմանագրի 3-րդ կետում կատարվում է փոփոխություն համաձայնագրի կնքմամբ, հետագայում դրան հղում կատարելուց ոչ թե նշվում է համաձայնագրի 3-րդ կետ, այլ պայմանագրի, նշված կանոնը կիրառվում է նաև իրավական ակտերի առանձին հոդվածներում կամ կետերում փոփոխություն կատարելուց, այսինքն փոփոխություն կատարող փաստաթուղթը ինքնին առանձին միավոր չէ և հանդիսանում է մայր փաստաթղթի բաղկացուցիչ մաս: Սույն դեպքում նույն կանոնի կիրառման արդյունքում պետք է փաստել, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021 թվականի թիվ 5 արձանագրային որոշմամբ մասնակցին պայմանագրի կնքումից զրկելու որոշումը իրավաչափ չէ, քանզի մասնակիցը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է կնքված պայմանագիրը և բանկային երաշխիքը և ըստ էության նշանակություն չունի, թե բանկային երաշխիքում առկա սխալը երբ է ուղղվել, քանզի այն փաստացի չի հակասել օրենսդրի նկատակին և մասնակցի կողմից պայմանագրի կնքման պահից սկսած պայմանագրի կատարումը ապահովված է եղել, իսկ Պատվիրատուի ռիսկերը երաշխավորված:

3. ***<u>Բողոքի պահանջը.</u>***

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով՝

խնդրում եմ

պարտավորեցնել թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու 22.02.2021 թվականի թիվ 5 արձանագրության վերացման կամ չեղարկման որոշում:

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

- *«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերության վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված պետական միասնական գրանցամատյանի քաղվածքի պատճենը.*
- *«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերության տնօրենի անձնագրի պատճենը.*
- *«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերության կողմից տրված լիազորագիրը.*
- *Նույնականացման քարտիս պատճենը.*
- *փաստաբանական գործունեության արտոնագրիս պատճենը.*
- *թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2021 թվականի թիվ 3 պատճենը.*
- *«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 11.02.2021 թվականին տրված թիվ 755-02 բանակային երաշխիքի պատճենը.*
- *թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.02.2021 թվականի թիվ 4 արձանագրության պատճենը.*
- *Երևանի քաղաքապետարանի 12.02.2021 թվականի թիվ 61/18 գրության պատճենը.*
- *«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 19.02.2021 թվականին տրված թիվ 1001-02 բանակային երաշխիքի սխալի ուղղման պատճենը.*
- *թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2021 թվականի թիվ 5 արձանագրության պատճենը.*
- *Երևանի քաղաքապետարանի 22.02.2021 թվականի թիվ 61/23 գրության պատճենը.*
- *պետական տուրքի անդորրագիրը:*

24.02.2021թ.

Հարգանքով՝

«ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ ներկայացուցիչ
փաստաբան Հակոբ Քոյլոյան